

ՔԱՐԱԻԱՆ

Երբ յանկարծ մօտենաս իմ կեանքի փռատուած օրերին,
 Զծաղրես, չխնդաս, որ խաբուած քո հոգին եմ սիրել,
 Ես կ'այրուեմ, կը փութեմ քո ներմակ, քո մաքուր շորերին,
 Իրրես մուր, եւ տխուր մի հեծիաք, որ բախտը հոգուս է նուիրել:

Ա՛խ, յուշ է ե՛ւ ուշ է, ե՛ւ գալիք, իմ անցեալը մրոտ,
 Ոսկեծամ անձրեւներ յորդառատ միայն քո աչքերից կաթեցին,
 Արցունքներ, որ ընկած իրրես վիշտ, լուսինն ու կարօտ,
 Եւ խօսեմք քո ձայնից, որ հոգիս չերմօրէն խայթեցին:

Անձրեւ ես, անձրեւ ես, ա՛խ թանկ է, թէ եւ չար է հոգիդ,
 Հեկեկում, լցնում ես աչքերդ, ալիքներն ալեկոծ ծովերի,
 Գինեմուղ, վառ օրեր քո սրտում, իրրես մութ գիշերներ իմ կողքին,
 Իրրես լոյս, բայց անլոյս ապրեցին, փշրելով մնացած օրերն իմ:

Դեռ երկար, շատ երկար կը փայլես, կը հրճուես յաղթութեան ծափերից,
 Ապրեցի, պարտուեցի, ինչ արած, աշխարհ է, դեռ խաւարն է յաղթում,
 Բայց ափսոս իմ սէրը, որ ծնունց ու կախունց միայն քո ափերից,
 Ու ես քեզ իմ փամած ապրումներն, իմ անցած ճանապարհն եմ մաղթում:

Անիծում եմ ես քեզ, ինձ նման, իմ սիրով ապրիր դու,
 Գէթ մի օր վայելիր այս անուշ տանջանքի բերկրաւեցներ,
 Եւ կը զգաս վիրաւոր իմ թռչուն, որ բոյնըդ դարձել է մի անդուռ
 Հին մատուռ, ուր փոշում թաւալունց իմ կեանքը:

... Երբ յանկարծ մօտենաս իմ կեանքի փռատուած օրերին,
 Զծաղրես, չխնդաս, որ խաբուած քո հոգին եմ սիրել,
 Ես կ'այրուեմ, կը փութեմ քո ներմակ, քո մաքուր շորերին՝
 Իրրես մուր, եւ տխուր մի հեծիաք, որ բախտը հոգուս է նուիրել:

ԱՐՏԱԿ ՀԱՄԱՐԶՈՒՄԵԱՆ